

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ

Աշոտ Մարդոյան

Եվրասիա միջազգային համալսարանի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հոդվածի շրջանակում ներկայացվել է ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում հանքերի շահագործման ընթացքում շրջակա միջավայրին հասցված բնապահպանական հետևանքները, ներկայացվել է դրանց կանխարգելմանն ուղղված ՀՀ բնապահպանությանն ախտաբանության գործողությունները և տրվել է դրանց արդյունավետության գնահատականը: Հոդվածում ներկայացվել են նաև ՀՀ կառավարության բնապահպանական առանձին որոշումներ և մատնանշվել է դրանց կիրառման արդյունավետությունը:

Հիմնաբառեր. հանքարդյունաբերություն, բնապահպանություն, կանխարգելում, լիցենզիա:

Բնությունը անգնահատելի հարստություն է, և նրան հասցված ցանկացած վնաս իր հետ կրերի սոցիալ-տնտեսական մեծ կուրուստներ: Շրջակա միջավայրի պահպանման գծով այսօր բացակայում է բնության պահպանության էկոհամակարգային մոտեցումը. թույլ օրենսդրական դաշտ, մասնավոր շահեր և ոչ որակյալ ղեկավարում:

Ցանկացած մետաղական օգտակար հանածոների հանքավայրի երկրաբանատնտեսական գնահատման գործում կան մի շարք, մեկը մյուսի հետ անխզելիորեն կապված կարևորագույն պայմաններ՝ «օղակներ», որոնցից թեկուզև որևէ մեկի անտեսումը բացասաբար կարող է անդադրաբանալ այդ գնահատման, իսկ հետագայում նաև հանքավայրի արդյունավետ շահագործման վրա: Այդ «պայմանները», այժմյան մեր պահանջներից ելնելով, հետևյալներն են.

- 1) հանքավայրերի որոնողագնահատողական ու հետախուզական աշխատանքների բոլոր փուլերում հանքավայրերի համալիր և ձշտության բարձր աստիճան ունեցող հետազոտությունները, երկրաբանահանքաբանական, այդ թվում նաև կառուցվածքային առանձնահատկությունների, լեռնատեխնիկական պայմանների բացահայտումը, որոնց հիման վրա էլ կատարվելու է հանքավայրերի շահագործման, հանքաքարերի արդյունահանման եղանակների ձիշտ ընտրությունը,
- 2) հանքավայրերի հանքանյութային կազմի ու կառուցվածքի (ստրուկտուրատեքստուրային) առանձնահատկությունների, օգտակար տարրերի տեղաբաշխման օրինաչափությունների, ձևերի, չափերի և այլ առանձնահատկությունների լիարժեք բացահայտումը, որոնց վրա էլ հիմնվելու է հանքաքարերի «անկորուստ» հարստացման եղանակների ձիշտ ընտրությունը,
- 3) հանքավայրի շահագործման՝ հանքաքարերի արդյունահանման եղանակների ձիշտ ընտրությունը, որը նպաստում է հանքաքարերի, այդ թվում նաև բոլոր օգտակար տարրերի անկորուստ կամ գոնե չնչին (անխուսափելի) կորուստներով արդյունահանմանը,
- 4) հանքաքարերի հարստացման եղանակների, զարգացած առաջավոր երկրների չափանիշների վրա հիմնված տեխնոլոգիաների ու տեխնիկայի ձիշտ ընտրությունը, որը դարձյալ կարող է բերել օգտակար տարրերի անկորուստ կամ գոնե չնչին (անխուսափելի) կորուստներով կորզմանը,
- 5) արտադրված խտանյութերի մետալուրգիական վերամշակման գործընթացում բոլոր օգտակար տարրերի առավելագույն չափերով առաջավոր երկրների չափանիշների մակարդակով կորզումն ու օգտահանումը,
- 6) մետալուրգիական փուլն անցած կորզված տարրերից մի քանիսի ամբողջությամբ կամ դրանց որոշակի մասի (ըստ պահանջարկի) մաքրումն ու գտումը, այդ թվում (դարձյալ ըստ պահանջարկի) մինչև գերագույն աստիճանի (99,9999%) գտումը, որի դեպքում գտված տարրերը միջազգային շուկայում ունենում են ամենաբարձր, սովորական տարրերի գներին հազարապատիկ գերազանցող գներ:¹

Լանքահումքային ռեսուրսների արդյունավետ շահագործումը հնրավոր է իրականացնել միայն ու միայն նշված վեց «պայմանների» պահանջների լիակատար բավարարման դեպքում: Դրանցից որևէ մեկի բացակայության դեպքում շահագործող ձեռնարկության արդյունավետությունը կլինի շատ ցածր, ցածր կամ լավագույն դեպքում միջին մակարդակի վրա և ոչ մի դեպքում չի կարող լինել ոչ բարձր և ոչ էլ շատ բարձր: Այսպես, օրինակ. նշված «պայմանների» երկրորդ կետի պահանջները բավարարող տվյալ-

¹ Տե՛ս Ճաղարյան Ա.Գ., «ՀՀ ընդերքի ռեսուրսային ներուժը և դրա տնտեսական գնահատումը», Երևան, 2004թ., էջ198:

ների բացակայության դեպքում անտեղյակության պատճառով կարող են անտեսվել հիմնական հանքանյութերի հետ հարակից տարածված շատ այլ արժեքավոր տարրեր և թափվել թափոնակույտեր այնպես, ինչպես մինչ այժմ անտեսվել են Քաջարանի հանքանյութերում առկա պլատինի խմբին պատկանող մետաղները՝ վանադիումը, սկանդիումը, տիտանը, երկաթը և այլն, որոնք հարստացրելի հետ թափվել և թափվում են թափոնակույտեր ու անվերադարձ կորսվում: Չորրորդ կետի պահանջների բացակայության դեպքում ընտրվում են հանքահարստացման տեխնոլոգիական այնպիսի սխեմաներ, որոնց դեպքում անտեսվում կամ արհամարհվում են շատ ու շատ արժեքավոր, հիմնական տարրերի հետ հարակից տարածված այնպիսի տարրեր, որոնց առկայությունը տվյալ հանքաքարերում արդեն իսկ հաստատված է, բայց և այնպես չեն կորզվում: Կամ նախկինում ընտրված, բայց արդեն իսկ հնացած ու ցածր արդյունավետություն ունեցող հանքահարստացման տեխնոլոգիաները չեն բավարարում ժամանակակից պահանջները, չեն ապահովում գոնե հիմնական տարրերի լիարժեք կորզումը, որի հետևանքով էլ այդ տարրերի զգալի քանակներ (մինչև 40-45%) հարստացրելի հետ թափվում են թափոնակույտեր (Քաջարանի, Ագարակի, Կապանի հանքահարստացուցիչ ֆաբրիկաների այսօրվա վիճակը դրավառ ապացույցն է): Այնինչ զարգացած շատ ու շատ երկրներում հանքաքարերից օգտակար տարրերի կորզումը խտանյութերի մեջ կազմում է 92-95%, իսկ մետալուրգիական վերամշակման գործընթացներում հիմնական տարրերի կորզումը խտանյութերից գերազանցում է 99%:

Այսպիսով, եթե մենք ձգտում ենք մեր ընդերքի հարստություններն օգտագործել արդյունավետ և ոչ թե թափել թափոնակույտեր ու կորցնել, պետք է ձգտենք հավասարվել զարգացած երկրների մակարդակին: Դա տեղի կունենա մեր սեփական մշակումների՝ տեխնոլոգիական լուծումների շնորհիվ, որի հնարավորությունը մենք ունենք զարգացած ու առաջավոր երկրների օգնությամբ, նրանց տեխնիկայի ու տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ, որն արդեն երկրորդական հարց է: Կարևորն այն է, որ այդպիսի լուծումներ պետք է կատարվեն և պետք է կատարվեն առանց հապաղելու, որքան շուտ, այնքան լավ, այնքան քիչ հարստություններ կթափվեն գետերն ու ձորերը:

ՀՀ ընդերքօգտագործման ոլորտը կարգավորվում է հիմնականում «Ընդերքի մասին» ՀՀ օրենսդրությամբ և «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքով:

«Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինա-

կան շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

Սովորաբար էկոլոգիական քաղաքականության իրականացման մեխանիզմների մասին խոսելիս առանձնացնում են 3 տեսակի մոտեցումներ.

- ուղղակի կարգավորում (պետության միջամտություն)՝ նորմատիվային, օրենսդրական, վարչական-վերահսկողական միջոցներ, ուղղակի հրահանգավորում;
- տնտեսական խթանում՝ շուկայական մեխանիզմների զարգացում;
- խառը մեխանիզմներ՝ առաջիկա երկու մոտեցումների սինթեզ:²

Բնօգտագործող ոլորտների համար զգալի մեծությամբ սուբսիդիաների տրամադրումը, բնական ռեսուրսների ցածր գինը կամ դրանց ընդհանրապես բացակայությունը, ինչը վերաբերում է ռեսուրսների հսկայածավալ շահագործման, հասարակության կողմից բնության նկատմամբ սեփականատիրական վերաբերմունքը և շրջակա միջավայրի նկատմամբ պատշաճ վերաբերմունքի բացակայությունը հանգեցրել են տնտեսության զարգացման տեխնոգեն տեսակի և շատ տնտեսական ու բնապահպանական ձգնաժամային իրավիճակների:

Շրջակա միջավայրի պաշտպանության շուկայի անհաջողությունը կապված է առաջին հերթին էքստենսիվների գնահատման գործնական անհնարինության, շրջակա միջավայրի դեգրադացիայի պատճառով հասարակության համար առաջացող սոցիալական ծախսերի, բնական բարիքների հասանելի լինելու և դրանց ցածր գների հետ:

Շուկայական պայմաններում շատ պայմանագրերի և գործարքների դեպքում անհրաժեշտ է կատարել ծախսեր, որոնք կապված են ինֆորմացիայի ստացման, բազմակողմանի բանակցությունների անցկացման հետ: Այդ ծախսերը կոչվում են տրանսակցիոն: Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում այդ ծախսերը կարող են մեծ կշիռ ունենալ սպասվելիք եկամուտների համեմատ: Այդ դեպքում իրական համաձայնության հանգեցնելու հավանականությունը քիչ է, իսկ բնության դեգրադացիան կշարունակվի: Պակաս կարևոր խնդիր չէ շուկայի «կարճատեսությունը», երբ անընդհատ ձգտում է նկատվում հնարավորինս արագ արդյունքի ստացմանը, առանց հաշվի առնելու երկարաժամկետ բացասական հետևանքները: Տնտեսության մեջ բնապահպանական «կարճատեսության» խնդիրը աֆորիզմի տեսքով ձևակերպվել է նաև Ֆ. Էնգելսի կողմից. «Պետք չէ շատ հպարտանալ բնության նկատմամբ տարած մեր հաղթանակներով: Այդ հաղթանակներից յուրաքանչյուրը առաջին հերթին հանգեցնում է այն հետևանքների, որոնք մենք ենթադրել էինք, սակայն երկրորդ և երրորդ հերթին՝ այն հետևանքներին, որոնք կանխատեսված չէին և հաճախ ոչնչացնում են առաջինների նշանակությունը»: Նշված թերությունների վերացման համար գուցե և զգացվում է պետական միջամտության անհրաժեշտությունը: Չնայած դրան՝ մասնագետները կարծում են, որ ամենախիմաստուն կառավարությունն էլ չի կարող ապահովել բնական ռեսուրսների բացարձակ արդյու-

2 Տե՛ս Алоян П. Г., Ураноносность геологических формаций Армении, Ереван, ГЕОИД, 2010г., էջ 68:

նավետ շահագործում: Դրա մասին են վկայում պետական կարգավորման արդյունքում շրջակա միջավայրի դեգրադացիայի աստիճանը աշխարհի թե՛ աղքատ, թե՛ զարգացած երկրներում: Որպես պետական քաղաքականության անարդյունավետության օրինակ կարելի է առանձնացնել հետևյալները՝

- սուբսիդիաների տրամադրումը (պարարտանյութերի, էներգիայի, ջրի և այլնի համար),
- հարկային համակարգը (բնապահպանությանը վնասող գործունեության խթանումը գյուղատնտեսության, էներգետիկայի և այլ ոլորտներում),
- գների վերահսկումը,
- բնապահպանությանը վնասող արտաքին առևտրի քաղաքականությունը,
- սեփականության իրավունքի ոչ ճիշտ ռեֆորմները,
- շրջակա միջավայրի կառավարման և մոնիտորինգի թերությունները:³

Չնայած պետական միջամտության թերություններին՝ դրա դերը շրջակա միջավայրի պահպանության հարցում բավականին մեծ է և դեռ կաճի հետագայում: Մասնավորապես պետությունը ուղղակի կամ անուղղակի կարգավորման միջոցով պետք է ապահովի արտադրության շուկայական օպտիմալ մակարդակի տեղաշարժ դեպի սոցիալական օպտիմալ մակարդակ՝ իրականացնելով հասարակության, այլ ոչ թե որոշ անհատների շահերը:

Պետության դերի թերագնահատումը նույնպես կարող է հանգեցնել բացասական բնապահպանական հետևանքների: Պետական քաղաքականության և շուկայի ապահոված անարդյունավետությանը զուգահեռ բացասական էֆեկտներ առաջանում են նաև ոչ ճիշտ ինստիտուցիոնալ կառավարման հետևանքով: Բնական պաշարների նկատմամբ սեփականության իրավունքի ոչ հստակ և ոչ կոնկրետ բաշխումը կենտրոնական և տեղական իշխանությունների ու մասնավոր ներդրողի միջև բերում են անցանկալի հետևանքների: Բնական պաշարների շահագործման հարցում պետական ու շուկայական կարգավորման մոտեցումներն էլ ունեն իրենց թերություններն ու առավելությունները: Համաշխարհային փորձը ցույց է տալիս դրանցից մեկի կիրառման անարդյունավետությունը, ինչը տեղիք է տալիս մտածելու, որ գուցե առավել արդյունավետ կլինի այդ երկու մոտեցումների համակշռված կիրառումը՝ կախված երկրի տնտեսության վիճակից, էկոլոգիական վիճակից և այլն:

Պետական միջամտության հիմնական նպատակը պետք է լինի բնապահպանական խնդիրների երաշխավորված լուծումը, քանի որ, ինքներդեք հասկանում, որ առաջին իսկ զանգվածային սնանկությունների, ֆինանսական վիճակի փոքր-ինչ վատթարացման դեպքում մարդկային գործու-

3 Տե՛ս Дроздов И.А. Договоры на передачу в пользование природных ресурсов. Учебно-практическое пособие. М.: Проспект, 2000., էջ 118:

նեության հենց առաջին գոհը դառնում է բնությունը:

Ապահովելով որոշակի դրական ազդեցություններ ստեղծված աշխատատեղերի, վճարված հարկերի, բարելավված ենթակառուցվածքների տեսքով՝ հանքարդյունաբերությունը միևնույն ժամանակ հանդիսանում է շրջակա միջավայրի աղտոտման հիմնական ուղորտներից մեկը, ընդ որում աղտոտման հետևանքով հասցված վնասները հիմնականում գնահատված չեն և համահունչ չեն փոխհատուցվում: ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից չի իրականացվում պատշաճ վերահսկողություն ընդերքօգտագործող կազմակերպությունների կողմից ընդերքօգտագործման օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

Վերահսկիչ պալատի ուսումնասիրություններով խախտումներ են արձանագրվել ընդերքօգտագործող ընկերությունների կողմից օրենքով և «Կոնցեսիոն վճարի չափը և վճարման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 8-ի թիվ 562-Ն որոշմամբ սահմանված կոնցեսիոն վճարների հաշվարկման և ՀՀ պետական բյուջե վճարման գործընթացում: Թվով 20 հանքարդյունահանման լիցենզիա ունեցող ընկերությունների համար հաշվարկված կոնցեսիոն վճարը կազմել է 158.979.6 հազ. դրամ, սակայն պետական բյուջե է վճարվել ընդամենը 79,812.2 հազ. դրամը:⁴

Բնապահպանական և բնօգտագործման վճարների հայաստանյան համակարգի հիմնական խոչընդոտներից են համարվում՝

- բնապահպանական և բնօգտագործման վճարների դրույքաչափերի անհամապատասխանությունը հասցված վնասին կամ օգտագործված ռեսուրսների հետևանքով ստացված եկամուտներին:
- հանքարդյունաբերության թափոնների համար հարկման բացակայությունը: Ինչպես արդեն նշվեց վերևում, հանքարդյունաբերության թափոնները կազմում են ամբողջ արտադրական թափոնների ավելի քան 99%, սակայն ըստ բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին օրենքի՝ վերոհիշյալ թափոնների տեղադրման համար սահմանված էր գրոյական դրույքաչափ՝ ի տարբերություն այլ արտադրական թափոնների, որոնց համար վճարները՝ 4-րդից մինչև 1-ին դասի համար համապատասխանաբար կազմում են 1500 դրամից մինչև 48 000 դրամ/տոննա դրույքաչափերով, ոչ վտանգավոր թափոնների համար՝ 600 դրամ/տոննա և հողածածկույթի քանդման և շինարարության հետևանքով առաջացած ոչ վտանգավոր թափոնների համար՝ 60 դրամ/տոննա դրույքաչափով:
- ՀՀ օրենսդրությամբ մինչ օրս չեն կարգավորվել հանքարդյունաբերության թափոնների՝ մակաբացման շերտի ապարների և պոչանքների հետ կապված հարաբերությունները: Թափոնների մասին օրենքով չի ընդունվել հիշատակված հարաբերությունները կարգավորող որևէ իրավական ակտ, ինչի հետևանքով ընդերքօգտագործող

4 Տե՛ս https://www.e-gov.am/u_files/file/Verahskich%20palat/5_4-.pdf

կազմակերպությունները հանքարդյունաբերական թափոնները շրջակա միջավայրում տեղադրելու համար փաստացիորեն ազատվել են բնապահպանական վճարներ վճարելու պարտականությունից, իսկ նշված թափոնները ստացել են այլ իրավական անվանումներ՝ լցակույտեր, տեխնիկական հանքավայրեր և այլն:

- մետաղական հանածոների համար սահմանված ռոյալթիները հանդիսանալով միայն ֆինանսական գործիք, ի տարբերություն բնօգտագործման վճարների, չեն խրախուսում ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը:

Վերը նշված համակարգերը, հանդիսանալով Հայաստանի Հանրապետությունում գործող շրջակա միջավայրի կառավարման տնտեսական մեխանիզմների կիրարկման գործիքներ, լրացուցիչ հստակեցման կարիք ունեն: Շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկման կարգերը և օրենքը կարող են մեթոդաբանական հիմք հանդիսանալ բնապահպանական և բնօգտագործման վճարների դրույքաչափերի վերանայման համար, սակայն մինչ այդ գործող վնասի հաշվարկման կարգերը պետք է վերանայվեն և հիմնավորվեն համապատասխան ներկայիս զարգացման պայմաններին:

Ընդերքշահագործման ոլորտի զարգացման հեռանկարներին որոշակի անդրադարձ կա ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի համար 422-Ն որոշմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության 2014–2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում», որտեղ ներկայացված են բնապահպանական և մասնավորապես հանքարդյունաբերական ոլորտի օրենսդրական, բնապահպանական և տնտեսական խնդիրներին հասցեագրված լուծումների տեսլականը, քաղաքականության ուղղությունները, զարգացման հեռանկարները: Նշված փաստաթղթի բնապահպանությանն առնչվող հատվածում անդրադարձ է արվել նաև ներկայումս ընդերքշահագործման հետևանքով պատճառվող տնտեսական վնասներին և հանքարդյունաբերական թափոնների հարկման գրօ դրամ դրույքաչափին: Նախատեսվում է ավելացնել բնօգտագործման և բնապահպանական վճարների դրույքաչափերը, խրախուսել մաքուր արտադրություն ապահովող բարձր տեխնոլոգիաների կիրառումը, խթանել կանաչ տնտեսության աճը և այլն:

«Ներկայումս կիրառվող բնօգտագործման և բնապահպանական վճարների փոխհատուցման գումարները զիջում են փաստացի պատճառվող վնասն ավելի քան 32–40 անգամ: Մասնավորապես տնտեսության զարգացման նպատակով որոշ ոլորտների համար բնապահպանական վճարների և ռեսուրսների օգտագործման դիմաց սահմանված 0–ական կամ ցածր դրույքաչափերի արտոնությունների հետագա կիրառումը խիստ ռիսկային է: Այս առումով բնապահպանական քաղաքականության տնտեսական մեխանիզմները պետք է վերանայվեն ...»:

Հիմնական բնապահպանական ռիսկերն են՝

- հանքի, արտաքին լցակույտի, արտադրական շինությունների և են–

- թակառուցվածքների տարածքներում բուսականության ոչնչացում, հանքի, արտաքին լցակույտի, արտադրական շինությունների և ենթակառուցվածքների տարածքներում հողի բերրի շերտի տեղափոխում, ինչը կառաջացնի հանվող հողի մասնակի վնասում,
- հանքարդյունահանման աշխատանքների արդյունքում կենդանիների կենսապայմանների ձևափոխություններ և մասամբ զգայուն կենսացենոզի ոչնչացում,
- փոշու արտանետումներ և տարածում դեպի բնական լանդշաֆտներ ու բնակելի թաղամասեր հանքային տեխնիկայի աշխատանքի արդյունքում,
- փոշու արտանետումներ և տարածում դեպի բնական լանդշաֆտներ ու բնակելի թաղամասեր ապարների փխրեցման նպատակով իրականացվող պայթեցման աշխատանքների արդյունքում /եթե կիրառվում է պայթեցում/,
- փոշու արտանետումներ և տարածում դեպի բնական լանդշաֆտներ և բնակելի թաղամասեր ապարների ջարդման և մանրեցման արդյունքում,
- դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումներ,
- մակերեսային հոսքերի աղտոտում հանքավայրի տարածքում սփռված ապարներով,
- հանքային տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում առաջացող աղմուկ,
- պայթեցումների իրականացման ժամանակ առաջացող աղմուկ,
- հանքային տեխնիկայի շահագործման և կայանման ընթացքում վառելիքի և քսայուղերի արտահոսքեր,
- բնական պատկերների ձևափոխում:

ВРЕДНОЕ ВОЗДЕЙСТВИЕ ГОРНОЙ ПРОМЫШЛЕННОСТИ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ

Ашот Мардоян

*Заведующий кафедрой управления и информационных технологий
Международного университета Евразия,
доцент Армянского государственного экономического университета,
кандидат экономических наук*

В пределах статьи представлены экологические последствия на окружающую среду в процессе эксплуатации руды в сфере горной промышленности Республики Армения. Представлены действия Министерства экологии РА по их предупреждению и дана оценка их эффективности. В статье представлены отдельные экологические постановления правительства РА и указаны эффективные меры их применения.

Ключевые слова: горная промышленность, окружающая среда, предотвращение, лицензия.

THE NEGATIVE IMPACT OF THE MINING INDUSTRY ON THE ENVIRONMENT

Ashot Mardoyan

*Head of Management and Information Technology
Department at Eurasia International University,
Associate professor at Armenian State University
of Economics, Ph.D. in Economics,*

The article presents the negative impact caused during the exploitation of mines in the Republic of Armenia. The article touches upon the measures to be implemented by the Ministry of Environmental Protection, with the assessment of the effectiveness of these activities in view. The article highlights the environmental protection solutions adopted by the government of the Republic of Armenia and points out the effectiveness of their application.

Key words: Mining, environment, prevention, license.